№ 89 Մայիսի 29 (Յունիսի 10) 1880 Մայիսի 29 (Յունիսի 10) № 89

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ազգ օրերից)

Գիւղական գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Գոյատարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Գոյատարութիւնները կամ փոխանակումները ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Գոյատարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անձնապաշտպանութիւն—Ներքին տեսութիւն, Հայոց թատրոն, Նամակ Ղզնախից, Նամակ Նուխուց, Ներքին լուրեր—Արտաքին տեսութիւն, Լուսինեանք,—Գոյատարութիւններ։

ԱՆՁՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

—

Հատ բաներում մեր ամբոխը, ենթարկվելով դարևոր նախապաշարմունքներին, յանցանք է համարում անձնապաշտպանութեան զգացմունքը։

Օրինակ մի հիւանդութիւն, ծաղիկ է յայտնվում մի հայ ընտանիքում,—և հայ ամբոխը մեղք է համարում մաքառել այդ հիւանդութեան դէմ, դիմել բժշկական օգնութեան, որովհետև նրա հաստատողութեամբ այդ հիւանդութիւնը Աստուած է ուղարկել մարդկային ցեղի մեղքերի համար.... Ամեն մի ցաւ, ամեն մի հիւանդութիւն իր հրեշտակն ունի, կարծում է մեր տգէտ ամբոխը, բժշկել մարդուն ցաւից, օրինակ բժշկել ուղենալ մանուկին ծաղիկ ասված հիւանդութենից, հայի կարծիքով մահացու մեղք է Աստուծու դէմ, այլ պէտք է հիւանդութեան հրեշտակին դուրեկան լինեի, նրան հաճելի լինել, որ հրեշտակի գութը շարժվի և նա ազատի երեխային նրան սպառնող մահից...

Որքան այդ տեսակ նախապաշարմունք կորստաբեր է, ինքնիրան հասկանալի է։

Ուրեմն այժմ մի ուրիշ օրինակ։

Գիւղացու դաշտերի վրա երևում է մորեխ, որ սպառնում է ոչնչացնել երկրի ամբողջ հունձքը և գցել գիւղացուն վերջին աղքատութեան մէջ.... Գիւղացուն ըստ պատնում է թանգութիւն, աղքատութիւն, գուցէ և սով...Բայց գիւղացին և այս դէպքում անձնապաշտպանութիւնը մահացու մեղք կը համարի։ Դուրս գալ դաշտ և միացած ոյժերով աշխատել ոչնչացնել ֆիզիկական միջոցը, գիւղացին երբէք չի համաձայնի։ Դա հաստատված է, որ մորեխը երկնային պատիժ է, որ Աստուած ուղարկել է մեզ մեր մեղքերի համար, ուրեմն ջանալ ոչնչացնել մորեխը, նշանակում է ընդդիմանալ Աստուծու կամքին, որ .ի հարկէ ապարդիւն գործ է։

Այդպիսով մեր ամբոխի մէջ տիրապետող խոր նախապաշարմունքը արգելք է լինում մեծ մասամբ հայի մէջ անձնապաշտպանութեան զգացմունքի զարգանալուն, արգելք է լինում նրա մէջ ամեն առաջադիմութեան և ուրեմն նպաստում է անշարժութեանը....

Հրէշաւոր նախապաշարմունքը այնտեղ է հասնում հայ ամբոխի մէջ, որ նա հնարելով զանազան առասպելներ, ինքն սկսում է հաւատալ այդ առասպելներին։ Հայ ժողովրդի մէջ սաստիկ տարածվում է այն համոզմունքը, որ մորեխի թևերի վրա գրված է եբրայերէն լեզուով «Աստուծու պատիժ» խօսքը, ուրեմն կուել այդ միջատի դէմ, ոչնչացնել ուզենալ նրան, նշանակում է մեղանչել Աստուծու կամքի դէմ, նշանակում է սրբապղծութիւն գործել....

Եթէ այդպէս շարունակի մեր ամբոխը, մանաւանդ առաջնորդված լինելով մեր տգէտ հոգևորականների ձեռքով, մենք շատ հեշտ կարող ենք քրիստոնէութենից կրկին ընկնել կռապաշտութեան մէջ, հասնել եգիպտական կրօնի հրէշաւորութեանը, որ սուրբ էր համարում և Աստուծու տեղ էր պաշտում ամեն տեսակ ֆիզիկական և վտանգաւոր կենդանիներին, կրոկոդիլներին, թունաւոր օձերին, և այլն....

Բայց բաղդաւորաբար այս տարի մի փոփոխութիւն է նշմարվում մեր Ընդրկովկասի թէ հայոց և թէ վրաց գիւղական աղգաբնակութեան բարոյական տրամադրութեան մէջ։ Այս տարի մեր գիւղական ամբոխը, կարծես, սկսում է հրաժարվել իր դարևոր ֆիզիկական նախապաշարմունքից, սկսում է ըմբռնել անձնապաշտպանութեան զգացմունքի պարտաւորութիւնը։

Մեր աչքի առաջև կատարվում է մի ուրախալի երևոյթ. մեր գիւղացին սրբապղծութիւն չէ համարում ոչնչացնել իր արտերի, իր հունձքի, իր օրական ապրուստի թշնամի, ֆիզիկական միջատը, և մենք տեսնում ենք որ ամեն տեղ մեր գիւղացիները ամենայն եռանդով ջանում են ոչնչացնել մորեխը։

Ինչ կարող չուրախանալ երբ տեսնում ենք ժողովրդի մէջ անձնապաշտպանութեան զգացմունքի արթնանալը. դա միշտ լինում է բարոյական և մտաւոր առաջադիմութեան նշան ամբոխի մէջ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, մայիսի 15-ին, Հայ դերասանական մշտական խումբը ներկայացրեց, կրկին անգամ, յօգուտ դերասան պ. Սուքիասեանցի Մոլիէրի «Դոն-Ժուան» հեղինակութիւնը։ Ներկայ գտնվելով լիշեալ ներկայացման՝ ես, գործը վերջանալուց, մտաբերեցի Պարսից երևելի բանաստեղծ Սաադի մէկ խորամիտ կատակը, որի հետ աւելորդ չեմ համարում ծանոթացնել «Մշակի» ընթերցողներին։ Սաադին մէկ անգամ անցնելով ադիւսազործի (քարիւշ կարող) մոտով լսում է որ նա մեծ զգացմունքով երգում է իրան բանաստեղծութիւններից մէկը։ Այդ հանգամանքը բաւականին հետաքրքրում է պօէտին և նա կանգնում է լսել ադիւսազործի երգը՝ այն նպատակով, որ իմանայ թէ օտարականները արդեօք ինչպէս են ձեռակերպում իր բանաստեղծութիւնները։ Քանի բոպէ սպասելուց յետոյ՝ Սաադին նկատում է որ երգիչը չափազանց կերպով աղմատում է իր գեղեցիկ աշխատանքը։ Բարկանալով մաքի մէջ սուտ երդչի անհմտութեան և չը զանելով ուրիշ ճանապարհ ադիւսազործին պատժելու, պարսից պօէտը սկսում է բաւականին հանդարտ կերպով ոտնակոխ անել նրա պատրաստած ադիւսները։ Ադիւսազործը տեսնելով անծանօթի լրբութիւնը՝ յարձակվում է նրա վրա ջարդելու նպատակով։ Պօէտը հանգստացնելով ադիւսազործ—երգչին հասկացնում է նրան, որ նրա բարկութիւնը ամենևին անտեղի է, որովհետև ինքը—Սաադին վարվում է ադիւսազործի աշխատանքի հետ այնպէս՝ ինչպէս նա—իրան պօէտների հետ։

Ցանկալի է իմանալ՝ ինչպէս կը վարվէր արդեօք ղարմած հոգի Մոլիէրը պ. Սուքիասեանցի հետ, եթէ լսէր այս վերջինի խաղը «Դոն-Ժուանի» պաշտօնում։ Պ. Սուքիասեանց չը տրիպատեալով ոչ մէկը այն յատկութիւններից, որոնք պատկանում են լիշեալ պաշտօնին, աւելի վատ ոտնակոխ անում անմահ Մոլիէրի գեղեցիկ աշխատանքը, քան թէ ադիւսազործը։ Նրա ոչ խօսակցութիւնը, ոչ շարժողութիւնը և ոչ ինչ և իցէ դերասանական մանրամասները չէին համապատասխանում, թէկուզ վերջի աստիճանում, այն պաշտօնին, որը նա ունեցել է համարձակութիւն (ներեցէք անկիղծութեանս) ընդունել իր վրա։ Նրա ուշը մեծ մասամբ շրջվում էր դէպի հասարակութիւնը, որտեղից, երևում էր, ինչ և իցէ նիւթապատճառներ էր հետաքրքրում նրան՝ քան թէ իր խաղը։ Դա քիչ է. մինչև անգամ նա, չը նայած որ երկրորդ անգամն է խաղում կարծ միջոցում և, մանաւանդ, որ բէնեֆիցիանտ է, մինչև անգամ դերն էլ չը գիտէր, այնպէս՝ ինչպէս պահանջում է պարտքը. նայեցքը շրջելով դէպի յուշարարը, նա նրանից էր երբեմն պահանջում օգնութիւն։ Թեղմ Մոլիէր! Եւ այդպիսի դերասանը երկվայ օրը ստացաւ հասարակութենից չորս հատ թանգագին ընծաներ։ Թէև ես շատ կարծիքաւոր եմ յիշեալ ընծաների ուղիղ նշանակութեան մասին, որոնք չար լեզուների ասելով, այսօր պիտի յետ դառնան մի և նոյն մագազին, որտեղից փոխ առուած են, բայց այդպիսի հանգամանքը թերեւութիւն չէ այն մարդկանց սրտին, որոնք ցաւում են մեր հասարակութեան արարմանցը—որ նա կարդին չէ գնահատում դերասանութեան իսկական տաղանդը։ Աւէք, խնդրեմ, ինչ է նշանակում վարձատրել պ. Սուքիասեանցի տաղանդը չորս ոսկեզարդ ընծայով, բայց պ. Տէր-Գաբրիելեանցի պէս կոմիկ—դերասանին վարձատրելու ծախսարութեամբ։ Մի՞թէ դա անքաղաքավարութիւն չէ հասարակութեան կողմից։ Երկուսից մէկը, կամ անքաղաքավարութիւն է կամ պարզ անհասկացողութիւն դերասանական գործի։ Բոլորովին ջոկ բան էր պ. Մանդինեանցը Լէպորելլոյի (Դոն-Ժուանի ծառայ) դերում։ Նրա գեղեցիկ խաղն էր միայն, որ պաշտպանեց Մոլիէրի աշխատանքը, Նրա հիանալի կոմիկական արտայայտութիւններն էին միայն, որ կարողացան պաշտպանել պ. Սուքիասեանցի պակասութիւնները։

Այս անգամ օրիորդ Պերանոյշն լաւ չէր սովորած իր բոլոր։ Բայց ինչ կը վերաբերէ օր. Աստղիկին՝ նա ըստ իր սովորութեան բաւական լաւ էր պատրաստուած։ Երկուսի խաղն էլ կարելի է համարել բաւականացուցիչ, աւել ոչ։ Մեացեալ դերասանների մասին աւելորդ եմ համարում խօսել։

Երկու խօսք էլ տիկին Փաշայեան-Տէր-Գրիգորեանցի մասին։ Այդ տիկինը, որը «Ծաոսի» զօրքվիում Ծաոսի դերը կատարեց, ուներ իրաւունք տաղանդաւոր կոչվել։ Դրա մասերները ու խօսակցութեան ձեռակերպութիւնները խաղի ժամանակ, ցոյց տալով բնական շնորհ, հաստատ կերպիւ խոստանում են ստեղծել դերնիս լաւ դերասանուհի, եթէ ինքը չարհամարհէ այդ պրոֆէսիան։ Հասարակութիւնը դրան էլ վարձատրեց, բայց երկար ծախսարութենից, թանգագին ընծաներով, որի դէմ ոչինչ չունեմ ասելու, բայց չը շնորհակալութենից զէպի այն պարգևատուն, որը գնահատեց տիկնոջ տաղանդը։ Կատ չէր լինի, եթէ ամենայն դերասանական ասաղանդ այդ կերպով գնահատվէր....

Շ. Կ.